Ծրագրի մասին ամփոփ

Բյուջե՝ $15 մլն.
Ժամանակացույց՝ 2023 – 2028

Թարմացվել է՝ դեկտեմբեր, 2024

Հայաստանն ունի կենսունակ մեդիա դաշտ, որը, սակայն, կանգնած է մարտահրավերների առաջ: Անկախ լրատվամիջոցները, ունենալով սահմանափակ ռեսուրսներ, դժվարանում են մշտապես ապահովել որակյալ տեղեկատվություն և այն հասցնել լայն լսարանի, այդ թվում՝ երիտասարդներին, փոքրամասնություններին և գյուղական համայնքների բնակիչներին: Հայաստանում քիչ են անկախ, ֆինանսապես կայուն լրատվամիջոցները, և վտանգված է նրանց երկարաժամկետ անխափան գործունեությունը:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող Հայաստանի մեդիայի զարգացման ծրագիրն աջակցում է երկրում անկախ մեդիայի կայացմանը: Ինտերնյուսի և գործընկերներ՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի (ՄՆԿ), Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ) և «Զինք նեթվորք»-ի կողմից իրականացվող ծրագիրը բարելավում է լրագրողական սկզբունքները, խթանում է հանրային նշանակություն ունեցող մեդիաների մրցունակությունն ու ֆինանսական կենսունակությունը, ինչպես նաև հանրության քննադատական մտածողությունը: Ծրագիրը համագործակցում է Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի, Հանրային լրագրության ակումբի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ. գործընկերները հոգեբանական, թվային և իրավական աջակցություն են տրամադրում լրատվամիջոցներին և լրագրողներին և խթանում են շահերի պաշտպանության գործողությունները:

Ծրագրի արդյունքները 2024թ. դեկտեմբերի տվյալներով

- Ծրագիրն աջակցել է 59 լրատվամիջոցների՝ ամրացնելով նրանց թվային անվտանգությունը, տրամադրելով իրավաբանական և հոգեբանական աջակցություն, օգնելով նրանց բարելավել էթիկայի չափանիշները: Լրատվամիջոցների 338 ներկայացուցիչներ մասնակցել են այս թեմաներով դասընթացների, ինչպես նաև նոր գիտելիք ու հմտություններ են ձեռք բերել ավելի որակյալ լրագրողական նյութեր ստեղծելու վերաբերյալ:
- Հայաստանի լրատվամիջոցները և այլընտրանքային բովանդակություն ստեղծողները՝ ինֆլուենսերներ և բլոգերներ, ստեղծել են թվով 805 նյութ հանրային նշանակություն ունեցող թեմաներով, ինչպես նաև մեդիա դաշտին վերաբերող իրադարձությունների և մարտահրավերների վերաբերյալ:
- 43 լրատվամիջոցներ ստացել են իրավաբանական աջակցություն և խորհրդատվություն, ինչպես նաև դատական պաշտպանություն Մեդիայի պաշտպանության հիմնադրամի կողմից:
- Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը մշակել է Հայաստանում թվային դեսպանի հայեցակարգը. ըստ հայեցակարգի՝ նախատեսվում է ստեղծել դիվանագիտական կարգավիճակ ունեցող դեսպանի առաքելություն, որը կներկայացնի երկիրը համաշխարհային թվային կառավարման հարթակներում և կխրախուսի խոսքի ազատությունը և էթիկան:
- Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի շահերի պաշտպանության ջանքերի շնորհիվ հետաձգվեց «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխությունների նախագծի քննարկումը. այս նախագծով նախատեսվում էր ընդլայնել ոստիկանության վերահսկողական մեխանիզմները՝ հանրային վայրերում տեղադրված տեսախցիկների միջոցով:
- 1,168 անհատ մասնակցել է մեդիագրագիտության թեմայով դասընթացների. մասնակիցների 72%-ը գրանցել է մեդիագրագիտության հմտությունների և գիտելիքների զգալի աճ: 100-ից ավելի հայաստանյան դպրոցներ մասնակցել են Մեդիագրագիտության շաբաթվա միջոցառումներին: 5 ուսուցիչներ իրականացրել են փոքր կրթական նախագծեր իրենց համայնքներում, և 2 հասարակական կազմակերպություններ մարզերում կազմակերպել են մեծահասակներին ու գրադարաններին ուղղված մեդիագրագիտության ծրագրեր:
- Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը երաշխավորել է ՄՆԿ-ի «Մեդիագրագիտություն» դասընթացը, ըստ այդմ՝ ՄՆԿ-ն հանդես է գալիս որպես ուսուցիչների պարտադիր ատեստավորման դասընթացներ կազմակերպող կառույց: Դասընթացի հիմքում «Մեդիագիտություն» ձեռնարկն է, որի տպագիր և առցանց տարբերակը նույնպես երախավորված է նախարարության կողմից:

Լրատվամիջոցներին տրամադրված դրամաշնորհները 2024թ. դեկտեմբերի տվյալներով

18
4 դրամաշնորհ՝ այլընտրանքային բովանդակություն ստեղծողներին
Բովանդակության մշակում

8
Տեխնիկական զարգացում

5
Ռազմավարական զարգացում

4
Ճգնաժամերի հաղթահարում

Հանրային նշանակություն ունեցող ԶԼՄ-ների ֆինանսական կենսունակություն

Ծրագիրը տրամադրում է բիզնեսի կառավարման անհատականացված աջակցություն ընտրված լրատվամիջոցներին: Համատեղ ջանքերով մշակվում են բիզնես ծրագրեր, որոնց նպատակն է խթանել լսարանի և եկամուտների աճը և նպաստել կայունությանը:

Լրատվամիջոցների կազմակերպչական, խմբագրական և տեխնիկական կարողությունների վերջին համապարփակ գնահատումը բացահայտեց վերջիններիս ուժեղ կողմերն ու բարելավման ենթակա ոլորտները: Սա հնարավորություն է տալիս այս լրատվամիջոցներին մշակել զարգացման ռազմավարական ծրագրեր: Ռազմավարական զարգացման և տեխնիկական զարգացման դրամաշնորհների և «Զինք նեթվորք»-ի խորհրդատվական աջակցության միջոցով ծրագիրն օգնում է ընտրված լրատվամիջոցներին բարելավել իրենց բիզնես գործունեությունը, ամրապնդել դիրքը շուկայում և որդեգրել մոնետիզացիայի արդյունավետ ռազմավարություններ:

Ծրագիրը նաև շարունակում է ջանքերը՝ ստեղծելու անկախ և թափանցիկ Մեդիայի աջակցության հիմնադրամ, ինչը թույլ կտա ապահովել հանրային հետաքրքրություն ունեցող լրատվամիջոցների երկարաժամկետ կայունությունը: 2024թ.-ին դոնորների և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում մշակվել է համապարփակ ռազմավարական փաստաթուղթ Հիմնադրամի համար, իրականացվել է Իրագործելիության վերլուծություն, որտեղ գնահատվել են ֆոնդի գործունեության հնարավոր մոդելները:

Լրագրության գերազանցության աքսելերատոր

Լրագրության գերազանցության աքսելերատորի միջոցով Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը ապահովում է գործնական ուսուցում և մենթորություն լրատվամիջոցների և բովանդակություն ստեղծողների համար: ՄՆԿ-ն և ԵՄԱ-ն օգնում են լրատվամիջոցներին մշակել խմբագրական քաղաքականություն և էթիկայի սկզբունքներ, իսկ Ինտերնյուսի մարքեթինգի և լսարանի ներգրավվման մասնագետն աջակցում է ընդլայնելու լսարանը որակյալ բովանդակություն ստեղծելու միջոցով:

«Թվապատում» մրցույթը և «Թվապատում» կոնֆերանսը, խրախուսում են նորարարական մոտեցումները և համագործակցությունն ու գիտելիքների փոխանակումը մեդիա մասնագետների միջև: Ինտերնյուսը նաև դրամաշնորհներ է տրամադրում լրատվամիջոցներին և բովանդակություն ստեղծողներին՝ մշակելու նյութեր հետազոտությունների միջոցով բացահայտված հանրային հետաքրքրություն ունեցող թեմաներով:

Նպաստավոր միջավայր որակյալ լրատվական դաշտի համար

ԵՄԱ-ն մշտադիտարկում է ԶԼՄ-ների վերաբերյալ օրենքների բարեփոխումները, պետական քաղաքականությունը և լրատվամիջոցների ազատությունները՝ սերտ համագործակցելով կառավարության և քաղհասարակության գործընկերների հետ: Հիմնական ուշադրության ոլորտներն են Զանգվածային լրատվության մասին օրենքը, Տեսալսողական մեդիայի մասին օրենքի փոփոխությունները և ինքնակարգավորման մեխանիզմները:

2024թ. ԵՄԱ-ն համախմբել էր մեդիայի և քաղհասարակության ներկայացուցիչներին՝ լրամշակելու Զանգվածային լրատվության մասին օրենքի նախագիծը: Նախագիծը վերանայվում է Վենետիկի հանձնաժողովի մեկնաբանությունների հիման վրա: Լրամշակվող նախագծում հստակեցվում են ինքնակարգավորման համակարգերը և տերմինաբանություն:

Ծրագիրը նաև աջակցում է ԶԼՄ-ների վերահսկողության մարմինների անկախությանը. համագործակցելով Հանրային հեռարձակողի խորհրդի հետ՝ աջակցում է ընթերցողների օմբուդսմենի դերի ինստիտուցիոնալացմանը Հանրայինում: Նախատեսվում է նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կարիքների գնահատում և կարողությունների հզորացման ուղղությամբ աջակցություն:

Երևանի մամուլի ակումբը նաև աջակցում է ԶԼՄ-ների Էթիկայի դիտորդ մարմնի գործունեությանը, և մեդիայի ինքնակարգավորման համակարգի մասին իրազեկման ծրագրեր է իրագործում:

Մեդիագրագիտություն

Համագործակցելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ՝ ծրագիրն աջակցում է կրթական համակարգում մեդիագրագիտության ինստիտուցիոնալացմանը:

Ծրագիրը բարելավում է նաև երիտասարդների, ուսուցիչների և երիտասարդական աշխատողների մեդիագրագիտության հմտությունները՝ կազմակերպելով դասընթացներ և համայնքային նախաձեռնություններ և աջակցելով համայնքային կազմակերպություններին՝ տարածելու մեդիագրագիտության հմտությունները և ներգրավվելու համայնքային կյանքում:

Առանցքային հետազոտություններ

Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն

Ծրագիրը երկրորդ անգամ է իրականացրել այս ամենամյա հետազոտությունը, որն օգնում է ավելի խորքային պատկերացնել մեդիա սպառման միտումները և շարունակաբար վերլուծել երկրի տեղեկատվական էկոհամակարգը, ինչն էլ, իր հերթին, թույլ է տալիս ծրագրի ողջ ընթացքում տվյալահեն որոշումներ կայացնել: 2024թ. հետազոտության արդյունքում դուրսբերված հիմնական առաջարկությունները ներառում են՝ թվային ռազմավարությունների ամրապնդում, լրատվամիջոցների նկատմամբ վստահության չափման բարելավում, պահանջարկի վրա հիմնված լուսաբանման մոտեցումների և ձևաչափերի արդիականացում, էթիկայի չափանիշների և մեդիագրագիտության վերաբերյալ նախաձեռնությունների շարունակականություն:

Մեդիա շուկայի վերլուծություն

«Զինք նեթվորք»-ի կողմից 2023թ.-ին առաջին անգամ իրականացված այս հետազոտության հետագա փուլերը կիրականացվեն 2025թ.-ին և ծրագրի վերջին տարում: Այս հետազոտությունը գնահատում է Հայաստանում գովազդի և մեդիա շուկան: Նախորդ ուսումնասիրության ընթացքում բացահայտված մարտահրավերը առնչվում էին լրատվամիջոցների ֆինանսական կայունությանը, լրագրողների վրա ճնշումներին, օբյեկտիվությանը, մոնետիզացիային և սոցիալական մեդիային:

V6

Այս հետազոտությունը նպատակ ունի օգնելու փաստեր ստուգողներին և լրատվամիջոցներին՝ հասկանալ հասարակության տարբեր խմբերի տեղեկատվության սպառման սովորությունները: Ծրագրի աջակցությամբ իրականացված առաջին քանակական V6 հետազոտությունը կհրապարակվի 2025թ.-ին: Այս հետազոտությունը համալրվում է որակական ուսումնասիրություններով, որոնցից ամենավերջինը առանձնացնում է լրատվամիջոցների բազմազան սպառումը, թվային հարթակների ներգրավվածությունը և թերահավատությունը վճարովի բովանդակության նկատմամբ: